ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ՍՏԱՑԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ թարգմանիչ վարդապետների հիշատակի ոգեկոչման օրը, հուլիսի 2-ին, Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի էջմիածին քաղաքի կիրակնօրյա վարժարանների այս տարվա շրջանավարտները Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի ձեռքից հանդիսավորապես ստացան ավարտական վկայականներ:

Տերունական աղոթքից հետո, բացման խոսքում ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը մասնավորապես նշեց. «Մայր Եկեղեցին հատուկ ուշադրություն է ցուցաբերում մանուկների նկատմամբ: Արդեն երրորդ տարին է, որ մեծ շուքով կատարվում է կիրակնօրյա դպրոցների շրջանավարտներին վկայականներ հանձնելու արարողությունը, որը նրանց համար դառնում է անմոռանալի իրադարձություն, յուրօրինակ ուղեգիր, որով նրանք հասուն կյանք են մտնում որպես քրիստոնեական կրթություն ստացած անձինք»:

ՔԴՔԿ-ի փոխտնօրեն հոգեշնորհ Տ. Զարեհ աբեղա Կարապյանն ընթերցեց շրջանավարտների անուն-ազգանունները, ովքեր մեկ առ մեկ մոտեցան Սրբազան Հորը և ստացան վկայականներ:

Այնուհետև շրջանավարտների անունից սրտի խոսք ասաց «Ս. Ներսես Շնորհալի» վարժարանի սան Հրանուշ Միքայելյանը: Ապա ներկաները ունկնդրեցին գեղարվեստական փոքրիկ հայտագիրը, որը պատրաստել էր կենտրոնի ջութակահարների համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Փառանձեմ Մելիքյան):

Վերջում բոլորին իր հայրական խրատն ու օրհնությունը բաշխեց Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը՝ ի մասնավորի շեշտելով. «Ես մտովի տեղափոխվեցի 50 տարի առաջ, Լիբանան, Բեյրութ, ուր կիրակնօրյա վարժարանի սան էի: Կիրակնօրյա վարժարանը մեր ընտանիքի համար առանձնահատուկ դեր ուներ, որովհետև քույրերս այնտեղ ավարտական վկայական ստացան, իսկ ես գնացի դպրեվանք: Կիրակնօրյա վարժարանը մի դպրոց է, ուր միասնաբար անցկացված կրոնական ուսումն ու ոգի առօրյան նպաստում են մարդու բարոյական կերտումին, և նա իր կյանքը կառուցում է Աստծո պատվիրաններին համապատասխան: Այդպիսի անհատը դառնում է լավ քաղաքացի, իսկ այդպիսի քաղաքացիներից կազմվում է օրինապահ հասարակություն: Այս առումով կիրակնօրյա վարժարանները մեծ դեր ունեն կատարելու մեր հասարակության մեջ, քանզի քրիստոնեական, բարոյական դաստիարակությունը անհրաժեշտություն է մեր երկրի համար»:

Սրբազան Հայրը գոհունակություն հայտնեց գեղարվեստական հայտագրի համար, շնորհավորեց շրջանավարտներին, ուսուցիչներին, ինչպես նաև ՔԴՔԿ-ի ղեկավարությանը:

ԱՐՄԻԴԱ ԹԵԼՈՒՆՑ